ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Թուրքմենստանի, Ուզբեկստանի Հանրապետության եւ Ուկրաինայի կառավարությունները, հիմնվելով պետությունների կառավարությունների ղեկավարների 1992 թվականի փետրվարի 8-ի որոշման վրա,

հաշվի առնելով պետությունների տնտեսության եւ սոցիալական զարգացման մեջ էլեկտրաէներգետիկայի հատուկ դերը,

գիտակցելով մասնակից պետությունների միավորված էներգահամակարգերի եւ էլեկտրական կայանների զուգահեռ աշխատանքի առավելությունը, համոզված լինելով էներգամատակարարման, էներգետիկ անվտանգության, հատկապես միջուկային օբյեկտների եւ շրջակա միջավայրի պահպանման հիմնախնդիրների արդյունավետ լուծման համատեղ շահագրգռվածության առկայությունը,

գիտակցելով միջպետական համաձայնագրերով պարտավորությունները եւ ձգտելով աջակցել պետությունների պատրաստակամությունը համագործակցությանը, հիմնված փոխադարձ հարգանքի եւ վստահության վրա, գտնում են, որ էլեկտրաէներգետիկայի բնագավառում միջպետական հարաբերությունների համակարգման հիմքն է հանդիսանում Պայմանավորվող կողմերի էներգետիկ համակարգերի ներքին կառավարման հարցերին չմիջամտելու եւ փոխադարձ շահի, իրավահավասարության սկզբունքների վրա խարսխված զուգահեռ աշխատանքի համաձայնությունը, կնքեցին սույն Համաձայնագիրը ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԽՈՐՀՈՒՐԴ

Համատեղ եւ համակարգված գործողությունների անցկացման նպատակով, ուղղված միավորված էներգետիկ համակարգերի արդյունավետ գործունեության հիման վրա պետությունների բնակչության եւ ժողովրդական տնտեսության կայուն եւ հուսալի էներգամատակարարման ապահովմանը, պետությունները կազմավորում են Անկախ Պետությունների Համագործակցության էլեկտրաէներգետիկ խորհուրդ, այսուհետ՝ Էլեկտրաէներգետիկ խորհուրդ:

Էլեկտրաէներգետիկ խորհրդի կազմի մեջ մտնում են ի պաշտոնե Խորհրդի անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչները՝ էլեկտրաէներգետիկայի կառավարման մարմինների առաջին ղեկավարները:

ՀՈԴՎԱԾ 2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Միավորված էներգետիկ համակարգերի կազմում աշխատանքի ընդունելի սկզբունքների որոշումը:

2.2 Էներգիայի փոխանցումների եւ հզորության միջպետական շուկայի իրավիճակի հաշվառմամբ, էներգիայի, հզորությունների եւ վառելիքի հեռանկարային հաշվեկշիռների հիման վրա էլեկտրակայանների համար էլեկտրաէներգիայի եւ վառելիքի փոխադարձ մատակարարման վերաբերյալ միջպետական, համակարգված Համաձայնագրերի նախապատրաստման մասնակցությունը:

2.3 Սպառողների փոխօգնության կազմակերպումը էներգամատակարարումներում, եւ միավորված էներգետիկ համակարգերի կայունության ապահովումը արտակարգ իրադրություններում ու ծայրահեղ պայմաններում:

2.4 Միավորված էներգետիկ համակարգերի հեռանկարային զարգացման ծրագրերի եւ վառելիքաէներգետիկ համալիրի կազմում էլեկտրաէներգետիկայի զարգացման ռազմավարության մշակման եւ իրագործման համակարգումը՝ պետությունների կառավարությունների հետ միասին:

2.5 Նոր տեխնիկայի եւ տեխնոլոգիաների, էլեկտրամատակարարման եւ ջերմամատակարարման բնագավառում միջպետական գիտական ծրագրերի եւ փորձարարական-կոնստրուկտորական մշակումների համակարգումը:
2.6 Համաձայնագրի մասնակիցներին աջակցության եւ օգնության ցուցաբերումը նոր էներգետիկ աղբյուրների շինարարության եւ գործող էներգետիկ օբյեկտների շահագործման եւ վերանորոգման կարիքների եւ շինարարական կոնստրուկցիաների, հարմարությունների, պաշտպանության միջոցների, պահեստամասերի, էներգասարքավորումների, նյութատեխնիկական պաշարների միջպետական մատակարարումների կազմակերպման համար:
2.7 Էլեկտրաէներգիայի եւ հզորությունների միջպետական մատակարարումների սակագների ձեւավորման նորմատիվ-մեթոդական հանձնարարականների համաձայնեցումը:
2.8 Էլեկտրաէներգետիկ օբյեկտների շինարարության եւ շահագործման նորմերի ու կանոնների համաձայնեցումը:
2.9 Էլեկտրաէներգետիկայի եւ էներգաշինարարության բնագավառում միասնական միջազգային չափորոշիչներով միացյալ միջազգային տարածքի համաձայնեցումը:
Միջազգային էներգետիկ կազմակերպություններին եւ միջազգային խորհրդակցություններին համատեղ մասնակցության կազմակերպումը:
2.10 Նոր էներգետիկ սարքավորում արտադրող ձեռնարկությունների հետ համատեղ, ինչպես նաեւ գործող սարքավորումների այժմեականացման, ջերմային եւ էլեկտրական ցանցերի ու կառավարման եւ կապի հսկողության համակարգերի միջպետական ծրագրերի մշակման համակարգումը:
2.11 Էլեկտրաէներգետիկայի բնագավառում բնապահպանության համատեղ ծրագրերի ստեղծումը:
2.12 Էլեկտրաէներգետիկայում հաշվառման եւ հաշվետվությունների միասնական ձեւերի համաձայնեցումը՝ անհրաժեշտ համատեղ որոշումների ընդունման համար:
2.13 Էլեկտրաէներգետիկայում էներգախնայումներով հանձնարարականների մշակումը եւ էներգիայի ոչ ավանդական աղբյուրների ներդրումը:

ՀՈԴՎԱԾ 3. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Էլեկտրաէներգետիկ խորհուրդը գլխավորում են նախագահը եւ փոխնախագահը, որոնք նշանակվում են Խորհրդի կողմից՝ Անկախ Պետությունների Համագործակցության էլեկտրաէներգետիկ ճյուղերի առաջին ղեկավարների թվից՝ ռոտացիայի կարգով, համաձայնեցված հերթականությամբ մեկ տարի ժամկետով:
Էլեկտրաէներգետիկ խորհրդի նախագահի գտնվելու վայրը այն պետության մայրաքաղաքն է, որի ներկայացուցիչն է նա հանդիսանում:

ՀՈԴՎԱԾ 4. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Էլեկտրաէներգետիկ խորհուրդը հավաքվում է ոչ պակաս, քան տարին երկու անգամ:
Էլեկտրաէներգետիկ խորհրդի արտահերթ նիստը կարող է գումարվել կամ նախագահի որոշմամբ, կամ խորհրդի ոչ պակաս, քան երեք անդամի առաջարկությամբ:
Էլեկտրաէներգետիկ խորհրդի նիստերի անցկացման վայրը այն պետության մայրաքաղաքն է, որի էլեկտրաէներգետիկայի ղեկավարը գլխավորում է Էլեկտրաէներգետիկ խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 5. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆ ՈՒ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Էլեկտրաէներգետիկ խորհրդի աշխատանքային մարմինն է հանդիսանում Գործադիր կոմիտեն:
Գործադիր կոմիտեն գլխավորում է Էլեկտրաէներգետիկ խորհրդի կողմից նշանակված նախագահը:
Գործադիր կոմիտեն հաշվետու է Էլեկտրաէներգետիկ խորհրդին:

Գործադիր կոմիտեի նախագահը պատասխանատու է Էլեկտրաէներգետիկ խորհրդի նիստի անհրաժեշտ նյութերի պատրաստման համար եւ մասնակցում է այդ նիստերին:
Գործադիր կոմիտեի անդամների եւ սպասարկող անձնակազմի կառուցվածքը, քանակությունը, աշխատանքի վարձատրման նախահաշիվն ու ձեւը հաստատում է Էլեկտրաէներգետիկ խորհուրդը:
Գործադիր կոմիտեի անձնակազմը որոշվում է նախագահի կողմից՝ Էլեկտրաէներգետիկ խորհրդի կողմից հաստատված կառուցվածքի եւ ծախսերի նախահաշվի սահմաններում:
Էլեկտրաէներգետիկ խորհրդի գործադիր մարմնի աշխատանքը կենտրոնանում է Էլեկտրաէներգետիկ խորհրդի գործունեությունն ապահովող փաստաթղթերի պատրաստման հարցերի վրա եւ իրականացվում է նախագահի կողմից հաստատված հատուկ ծրագրով:
Գործադիր կոմիտեի գտնվելու վայրը Մոսկվա քաղաքն է:

ՀՈԴՎԱԾ 6. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Էլեկտրաէներգետիկ խորհրդի եւ դրա աշխատանքային մարմինների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է պետությունների էներգահամակարգերի, Էլեկտրաէներգետիկ միավորումների (ընկերությունների) հատկացումների հաշվին՝ հավասար չափով:
Էլեկտրաէներգետիկ խորհրդին կից կարող են ձեւավորվել կոլեկտիվ ֆոնդեր:
Ֆոնդերի ձեւավորման եւ օգտագործման կարգը հաստատվում է Էլեկտրաէներգետիկ խորհրդի կողմից:

ՀՈԴՎԱԾ 7. ԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պետությունների էներգահամակարգերի հարաբերությունը կենտրոնական կարգավարական վարչության հետ կարգավորվում է հատուկ պայմանագրերով՝ կնքված ըստ օպերատիվ կարգավարական վարչության կազմակերպման մասին Համաձայնագրի:

ՀՈԴՎԱԾ 8. ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պետությունները փոխադարձ պատասխանատվություն են կրում սույն Համաձայնագրով պայմանավորված պարտավորությունների խախտման համար:
Էլեկտրաէներգետիկ խորհուրդը յուրաքանչյուր պետության առջեւ սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում շարադրված գործառույթների կատարման համար կրում է պատասխանատվություն:

ՀՈԴՎԱԾ 9. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման օրվանից եւ գործում է անորոշ ժամկետով: Համաձայնագիրը կարող է լրացվել կամ փոփոխվել այն ստորագրած բոլոր Կողմերի համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 10. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ

Սույն Համաձայնագրով հարաբերությունների դադարեցման շահագրգռվածության առաջացման դեպքում, պետություններից ցանկացածը այդ մասին ծանուցում է Էլեկտրաէներգետիկ խորհրդին:
Մեկ տարի անց դիմող Կողմն այլեւս չի կրում սույն Համաձայնագրով պայմանավորված որեւէ պարտավորություն:

ՀՈԴՎԱԾ 11. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՆԱԼԸ

Այլ պետություններ Էլեկտրաէներգետիկ խորհուրդ համապատասխան դիմում

ներկայացնելու միջոցով կարող են միանալ սույն Համաձայնագրին, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրը ստորագրած բոլոր Կողմերի՝ դրա համար համաձայնությունը ստանալուց հետո:

ՀՈԴՎԱԾ 12. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Էլեկտրաէներգետիկ խորհրդում պաշտոնական լեզուներն են պետությունների լեզուները:
Էլեկտրաէներգետիկ խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Կատարված է Մինսկ քաղաքում 1992 թվականի փետրվարի 14-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն:
Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը Պայմանավորվող կողմերին կուղարկի Համաձայնագրի հավաստված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի փետրվարի 14-ից: